

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Մարգարյանի ուղերձը Մայրության և գեղեցկության տոնի առթիվ,

07.04.2016



Միրելի տիկնայք, մայրեր ու քույրեր.

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Մայրության և գեղեցկության տոնի առթիվ:
Մարիամ Աստվածածնի ավետման այս տոնին ցանկանում եմ, որ քրիստոնեական սիրով պարուրված լինեն Ձեր ընտանիքները:

Դարեր ի վեր ազգապահպանության, ազգային արժեհամակարգի ձևավորման հենասյուներից մեկը հայ մայրն է եղել: Հայոց մայրերն են պահպանել ազգային հոգեկերտվածքը և, ձևավորած հայկական ուրույն դիմագիծը փոխանցելով իրենց զավակներին, դարձել են սերունդներին կապող ոսկե օղակը:

Միրելի մայրեր, անհերքելի է այն փաստը, որ սերունդների հայեցի դաստիարակությունը, նրանց հոգիներում ազգային և համամարդկային արժեհամակարգի ձևավորումը, որ ամենքիս գործն է, մեծապես Դուք եք կրում Ձեր քնքնուշ ուսերին:

Մոր կերպարը հայ ընտանիքում մշտապես եղել է սիրո ու պաշտամունքի արժանի: Այսօր էլ Ձեր զավակները կրկին հաստատում են, որ պատրաստ են կյանքի գնով պաշտպանել իրենց սուրբ մայրերին, սիրելի քույրերին ու դուստրերին, թշնամու յուրաքանչյուր ոտնձգությունից:

Միրելիներս, թեև այս տոնը ևս մի հաճելի առիթ է միայն սիրո, մեծարանքի ու գնահատանքի խոսքեր հղելու Ձեզ, սակայն թույլ տվեք այս պահին Ձեզ մաղթել առաջին հերթին խաղաղություն ու կրկին խաղաղություն: Թող Ձեր աչքերը երբեք չթացվեն և իրենց պայծառ լույսով փարոս դառնան Ձեր զավակների ճանապարհներին, իսկ Ձեր անսպառ սերը նրանց անվտանգ ուղեկցի հայրենական տուն:

Թանկագին մայրեր, մաղթում եմ, որ միշտ մնաք հայուհու առաքինի կերպարի մեջ, որը բոլորիս հպարտությունն է:

Թող առողջությունը, սերն ու ընտանեկան գորովանքն անպակաս լինեն ձեզանից: Կրկին շնորհավորելով Ձեզ Մայրության և գեղեցկության տոնի առթիվ՝ մաղթում եմ երջանկություն, ընտանեկան ջերմություն, անամպ երկինք ու խաղաղ կեցություն: Միշտ վայելեք զեր զավակներին ողջ ու առողջ տեսնելու բերկրանքը:

Իմ խոնարհումը՝ հերոսներ ծնած ու դաստիարակած հայոց մայրերին: